



ԱՄԷՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՏԻԱՐ ՀՐԱՅՐ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ (ԱՄՆ) «Ս. ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» Ա. ԿԱՐԳԻ ԸՔԱՆԾԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ՀՐԱՅՐ ՅՈՎՆԱՆՅԱՆԻՆ,
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄՍՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԹՈՄՋ ՌԻՎԸՐ, ՆԻՒ ՃԸՐՋԻ

Աստուծոյ ողորմութեամբ խորապէս մխիթարուած ենք, որ սփիւռքի տարածքի վրայ, մեր հաւատացեալ ժողովուրդի ծոցին մէջ կան ու կը գործեն պատուական անձինք, որոնք իրենց բարոյական եւ նիւթական օժանդակութեամբ կը շէնացնեն ու կը պայծառացնեն մեր աղօթքի Տուներն ու կրթական-մշակութային հաստատութիւնները:

Մեր ազգի այդ պատուական գաւակներու հոյնին կը պատկանիք նաև Դուք, յարգարժան Տիար, Ձեր եկեղեցաշէն ծառայութիւններով և հանրօգուտ նուիրատուութիւններով, նախ իրաքահայ, ապա ամերիկահայ համայնքներուն մէջ: Մեզ քաջ ծանօթ է Ձեր ազգօգուտ գործունէութիւնը:

Մենք յոյժ գովելի կը գտնենք Ձեր բարի մտածումը և յիսուն հազար տոլլարի սրտաբոխ նուիրատուութիւնը, յօգուտ Մայր Աթոռիս հոգևոր ճե-

մարանի, մեր Եկեղեցիին արժանատր նոր սպասարներ պատրաստելու գործի համար:

Ի գնահատումն Ձեր ազգանուէր ու եկեղեցաշէն բազմամեայ արդիւնաշատ ծառայութեանց, այսու Հայրապետական Մեր կոնդակաւ կը շնորհենք Ձեզի «Ս. Գրիգոր Լուսաւորչի» Ա կարգի շքանշան, աղօթելով որ Տէրը Ձեզի և Ձեր բոլոր հարազատներուն պարգևէ քաջատողջ, երկար ու խաղաղ տարիներ ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք գորացեալ Սուրբ Հոգուով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

Հարց յե Դ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տոաւ կոնդակա ի 14 դեկտեմբերի
1979 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԸ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 992

